



# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< >> \_\_\_\_\_ 2017թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

## ՈՒՂԵՐԶ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻ ԱՌԹԻՎ

#### Հարգելի շիրակցիներ

Ի սրտե շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Անկախության 26-րդ տարեդարձի կապակցությամբ: Անկախության ձեռքբերումը հայ ժողովրդի դարավոր իդձերի իրականացումն էր և մեծագույն հաղթանակը՝ իր բազմադարյա պատմության մեջ:

Այսօր մեր երկիրն ընտրել է ժողովրդավարական պետության կառուցման համակարգը, ինչը հնարավորություններ է ստեղծելու քաղաքակիրթ աշխարհի հետ ինտեգրվելու և այլ պետությունների ու ժողովուրդների հետ հաստատելու իրավահավասար փոխհարաբերություններ:

Մեր ինքնությունը պահպանելու և ազգային նվիրական իդձերն իրագործելու ճանապարհը, վստահ եմ, կկարողանանք միասնական ջանքերով պահպանել, դրանց հավելել նորերը և դիմակայել ցանկացած մարտահրավերի:

Այս տոնական օրը բոլորիս ցանկանում եմ խաղաղություն, տոկունություն, եռանդուն և ստեղծագործ աշխատանք՝ հանուն անկախ Հայաստանի ապագայի:

Ա. ԽԱԶԱՏԻՅԱՆ